ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

-19-- օգոստոսի 2015 թվականի թիվ 151--Ա

## <<ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ>> ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի N 901-Ն որոշումը՝

որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին>> թիվ 901 –Ն որոշմամբ ՀՀ Տավուշի մարզպետարանին <<Այլ ընթացիկ դրամաշնորհներ>> հոդվածով հատկացված 1.200.0 հազար դրամ գումարից 1160.0 հազար դրամն ուղղել <<Լավագույն մարզական ընտանիք>> միջոցառման մասնակիցների համար անհրաժեշտ մարզահագուստի ձեռք բերմանը և մասնակիցների տեղափոխմանը՝ համաձայն հավելվածի:
2. Մարզպետարանի գլխավոր ֆինանսիստ Ս.Դավթյանին՝ նախատեսված գումարը սահմանված կարգով հատկացնել <<Լավագույն մարզական ընտանիք>> միջոցառման մասնակցության համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ժամանակավոր պաշտոնակատար
Լ.ՍԱՐԳՍՅԱՆ

-19-օգոստասի 2015թ.
ք.Իջևան

Հավելված

ՀՀ Տավուշի մարզպետի
–19--օգոստոսի
2015թ.
թիվ -151-Ա որոշման

## <<ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ>> ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԱՐԶԱՀԱԳՈՒՍՏԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ

| հ/հ | Ծախսերի անվանումը | Գինը /հազար դրամ/ | Քանակը | Մասնակիցների թիվը | Գումար/հազար դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Մարզահագուստ | 24.858 | 40 | 40 | 1994.320 |
| 2. | Ճանապարհածախս | 4.142 | 40 | 40 | 165.680 |
| | Ընդամենը | | | | 1160.0 |

ՀՀ Տավուշի մարզպետարանի
Աշխատակազմի ղեկավար Ս.Դավթյան